ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Դավիթ Կարենի Ղլիջյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության տնտեսական ոլորտի վերահսկողության վարչությունում որպես փորձագետ 6 ամիս աշխատելու ժամանակահատվածում (01.08.2023-09.01.2024թթ.) իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի հանձնարարությունների հիման վրա իրականացրել և մասնակցել եմ թվով 2 մշտադիտարկման աշխատանքների, մասնավորապես.

1. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Մասնագետների պատրաստման ԲՈՒՀ-մասնավոր հատված համագործակցություն» միջոցառման արդյունավետության և օրինականության նկատմամբ մշտադիտարկում: Մշտադիտարկման վերաբերյալ կազմվել է տեղեկանք:

2. ՀՀ կառավարության «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N 1863- Լ որոշման կատարման նկատմամբ մշտադիտարկում, որը դեռևս գտնվում է ընթացքի մեջ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի հանձնարարագրերի հիման վրա մասնակցել եմ թվով 4 ուսումնասիրությունների, մասնավորապես.

1. Մասնակցել եմ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում իրականացված՝ «11004. ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերի հանրային իրազեկման ապահովում» միջոցառման իրականացման համար հատկացված գումարի ծախսման օրինականության և արդյունավետության ուսումնասիրության աշխատանքներին:

2. «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամում և վերջինիս մասնակցությամբ իրավաբանական անձանց՝ «Սևանի իշխան» և «Սևան Ակվա» ՓԲ ընկերություններում ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի կողմից ներկայացված գրության շրջանակներում մասնակցել եմ ուսումնասիրության աշխատանքներին:

3. ՀՀ վարչապետի հանձնարարականի հիմքով ՀՀ վարչապետի աշխատակազմում, ՀՀ ֆինանսների և ՀՀ էկոնոմիկայի նախարարություններում իրականացրել եմ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում նշանակված ծառայողական քննության օրինականության ուսումնասիրություն:

4. Մասնակցում եմ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում իրականացվող՝ Գյուղատնտեսական ոլորտի պետական աջակցության ծրագրերի իրականացման շրջանակներում ծրագրերի շահառուներին գումարների հատկացման օրինականության և արդյունավետության ուսումնասիրության աշխատանքներին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ **ԴԱՎԻԹ ՂԼԻՋՅԱՆ**

«10» հունվար 2024թ.